ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«05» հոկտեմբերի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

1994 թ.-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հոկտեմբերի 5-ը հռչակվել է Ուսուցչի և կրթական ոլորտում աշխատողների մասնագիտական օր:

Կրթության ոլորտի հարգելի ներկայացուցիչներ, չգիտեմ ավելի կարևոր գործ, քան ձեր մասնագիտությունն ու առաքելությունն է: Չկա ապագա առանց որակյալ կրթության, առանց ձեր նվիրումի:

Մենք լավ ուսուցչին ենք պարտական ոչ միայն գիտելիքով զինված աշակերտի, այլև վաղվա գիտակից քաղաքացու, անմնացորդ հայրենասերի, երջանիկ անհատի, առողջ հասարակության, զարգացող և ուժեղ պետության կայացման համար:

Գնահատելով ձեր վաստակն ու հայրենանվեր աշխատանքը՝ շնորհավորում եմ մասնագիտական գեղեցիկ տոնի առթիվ: Թող լուսավոր ու արգասաբեր լինի ձեր մասնագիտական ուղին:

Խաղաղություն և բարեկեցություն եմ մաղթում ձեզ և ձեր ընտանիքներին: Եղեք երջանիկ, առողջ ու միշտ կենսախինդ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ